Բ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ՆՈՅԵՄԲԵՐ 1 1892 ԹԻՒ 21

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԱՄՍՈՑ 1ԻՆ ԵՒ 15ԻՆ

Տէր և Խմբագիր — Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ Editor — M. S. GABRIEL M. D.

202 W. 23d St., New York.

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար 2 թալէր կամ 10 ֆրանք։

Բաժանորդագրութիւնք կը հաշուին Յունվար 1 էն։

ՀԱՅԵՐ Ի ՏԱՃԿԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԵՐ ՅԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ

Օսմանեան բռնապետութեան լծին և լրտեսութեան հազարաւոր աչաց տակ իսկ մեր Տաճկահայ եղբարք շատ աւելի հայրենասէր, եռանդուն և գործունեայ են, շատ աւելի միաբան, համակիր և կազմակերպեալ են քան արտասահմանի Հայոց մեծագոյն մասն։

Արտասահմանեան Հայոց պառակտեալ և անզօր վիճակն եթէ ծանօթ լինի մայր հայրենեաց, յոյժ վհատեցուցիչ տպաւորութիւն պիտի գործէ։ Հոն շատ տարբեր կը կարծեն մեր զօրութեանց վիճակն։

Գաղթական աշխարհի այս խղճալի վիճակն արդիւնք է իւր խղճալի մամլոյն։ Խօսքի և մամուլի ազատութիւնն չարաչար կը գործածուի արտասահմանի մէջ, և յառաջ կը բերէ դառն պտուղներ։

Կա՛մ արտասահմանի Հայեր պիտի սպաննեն իրենց զեղծ լրագրութիւնն, կամ զեղծ լրագրութիւնն պիտի վերջապէս սպաննէ դոցա բոլոր բարի զգացումներն և միաբան գործունէութեան բոլոր ընդունակութիւնն։

Տաճկահայք ազատական մամուլ չունին. նոքա լրագրական զրախօսութեանց չեն նայիր, այլ չօշափելի գործունէութեան. ուստի և գրեթէ ամեն ուրեք նոքա հետ զհետէ մի և նոյն դրօշի տակ կը միանան և կը պատրաստուին։

Ամո՛թ մեր ազատական կոչուած ողբալի և կորուսիչ լրագրութեան։

ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Ամերիկայի, մասնաւորապէս Նիւ Եորքի, Հայերն ասկէ երեք չորս տարի առաջ ժողովրդային ընդհանուր հաւաքումներ կ'ընէին։ Հայրենասիրական ատենախօսութիւններ և ճեռնարկութիւններն այդ ամենաժողով գումարմանց մէջ կը լինէին։

Այդ գումարմանց առաջնորդն փորձով տեսաւ թէ ցորչափ հայրենասիրական ճառեր և երգեր լսելու շրջանին մէջ է բանն, ընդհանուր գումարումներ լաւ են, բայց երբ կարգն գործնական քայլ առնելու կուգայ, անհնար է իրական արդիւնք յառաջ բերել այն բազմութեան միջոցաւ որ իւր մէջ ամեն տեսակ հայ, ամեն տեսակ բնաւորութիւն, ամեն աստիճանի կրթութիւն (կամ անկրթութիւն,) ամեն տեսակ սկզբունքի տէր (կամ ըսկզբունքէ զուրկ) անհատներ կը պարունակէ։

Կան կարգ մի մարդիկ որք կուսակցութիւն ըսուածը ինքնին նպատակ կարծելով՝ կուզեն որ ամեն բան և ամեն անձ առանց ոևէ վերապահութեան ծառայէ կուսակցութեանն։ Կան մարդիկ ալ որ Կուսակցութիւնն իբր միջոց կը նկատեն, և միայն այնքան կը յարգեն զայն և այնչափ ժամանակ յարեալ կը մնան այնմ որքան նպատակին կը ծառայէ կուսակցութիւնն։ Հայրենասիրական կուսակցութեան մի նպաստել երբ նա դադարած է հայրենասիրական լինելէ, չնչանակեր հաւատարմութիւն այլ խօթամտութիւն։

Ամերիկայի Հայերն՝ մանաւանդ վերջին երկու տարուան մէջ հետ զհետէ կ'արթննան։ Այժմ շատ շատուոր են անոնք որք հին և ոսնեալ կուսակցութենէն գարշած լինելով՝ տեսակ մի թուլութեան և չուարման մէջ կը մնան անգործ. իսկ այլք արդէն իրենց համար լաւագոյն կեդրոն մի և առաջնորդ գտած՝ կը շարժին։

Թէև Ամերիկայի Հայոց այժմու վիճակն՝ ազգային շարժման տեսակետով՝ ողբալի է, բայց նշաններ կան նոր և լաւագոյն վիճակի մի մերձեցումն աւետող։

Մեք խրատ կուտամք այլևայլ տեղական առաջնորդներուն կազմակերպել տեղական ազգային ընկերակցութիւններ կամ Յանձնախմբեր՝ շատ հոգ տանելով անդամոց ընտրութեան.—նայիլ որակին ոչ թէ քանակին։ Խոշոր թիւերն յաճախ խոշոր վտանգներ կը պարունակեն։

Պէտք չէ յուսահատիլ Ամերիկիայի Հայերէն։

Նախորդ թուով խօսած ենք Հայ Հայրենասիրաց և Հայ Հանճարաց վերայ. ներկայիս կը ցուցնենք թէ ով է հայրենասէր և ով է հանճար։ Մեր բաղձանքն է հանրային ողջմտութիւն և ժողովրդային հասկացողութիւնն մշակել։ Որքան աւելի յստակի և զօրանայ հանրային կարծիքն, անքան նուազ կրնան կեղծն, մոլին ու մոլորը յաջողիլ ինասելու ազգային շահուց և այնքան աւելի ճշմարիտ և զգօն հայրենասէրք կը գտնեն աջակցութիւն սուրբ նպատակին հասնելու համար։

«ՀԱՅԿ»ի 1892 թուականին համար ցարդ անվճար մնացած բաղում բաժնեգներ կան։ Եգիպտոսէն, Ճավայէն, և ուրիշ ոևէ երկրէ մեզ դրամ հասցուցնելու դիւրին և ապահովկերպեր կան, որք բաժանորդաց գաղտնիք չեն։ Մինչև անգամ կրնան իրենց երկրին (կամ ոևէ երկրի) ոսկեդրամէն յղել ապահովագրեալ նամակի ծոցով, ինչպէս ոմն ըրած էր այս շաբթու Պուլկարիայէն։

Մաղթենք որ մեր խնդիր այս անգամ լսելի լինի։

Entered as second-class mail matter. at P.O.NewYork. NY

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայեր ի Տաճկաստան և Հայեր Ցարտասահմանի — Ազգային Շարժումն Ամերիկայի Հայոց մէջ — Ո՞վ է Հայրենասէր և ո՞վ է Հանճար. — Խրատ Հայ Հեղինակին. — Բողոքագիր Ուղղեալ Մեծ Պետութեանց Եւրոպիոյ — Իմ Հայրենասիրական Լրագրոց Երրորդութիւն — Նամակ Կ. Պոլսէն. — Նոր Հրատարակութիւն — Նամակ Առ Խմբագիրն. — Այլ և Այլք։

Ո՞Վ Է ՀԱՅՐԵՆԱՍԷՐ
ԵՒ
Ո՞Վ Է ՀԱՆՃԱՐ

Ա

Ո՞Վ Է ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

Հայոցս համար հայրենասիրութեան դարն հասած է, ա՛յո, բայց պէտք չէ կարծել թէ ալ դիւրին բան է հայրենասէր լինիլ։

Եթէ Հայաստանի կենացն բաժակ պարպել, ժողովներ ընել, երգել, ճառ խօսիլ, ուղերձներ մատուցանել, ծափ զարնել և կեցցէ աղաղակել բաւէր հայրենասէր լինելու համար, ամեն ոք հայրենասէր կը լինէր։

Ո՞վ է ուրեմն հայրենասէր։

—Է՛, ամեն ոք գիտէ թէ հայրենասէր է նա որ կը սիրէ իւր հայրենիք։

—Շա՛տ լաւ, շա՛տ ուղիղ։ Բայց հայրենիքն սիրե՞լըն ինչ է։

Հայրենասիրութեան բարձր ու ցած անթիւ աստիճաններ կան. մեք ամենայն առատութեամբ այժմ կը չռայլեմք այդ փառաւոր տիտղոսն և մեր չուրջ հայրենասիրաց բազմութիւն տեսնել կը կարծեմք։ Զա՞րժեր որ վայրկեան մի քննեմք «հայրենասէր» կոչուած այս նորելուկ դրամի հանգամանքն, և սովրիմք զանազանել վարնոցն ազնիւէն, կեղծն ճշմարիտէն, խառնն զուտէն։

Հարկ է զայդ ընել, քանի որ, գաղթական Հայոց մէջ մանաւանդ՝ ուր խօսիլն ու գրելն ազատ է, շըրթամբ հայրենասէր լինելու փորձութիւնն ալ շատ է։

Ճշմարիտ հայրենասիրութիւնն անձնուէր հայրենասիրութիւնն է. օգտակար և պատուական հայրենասիրութիւնն՝ իմաստուն հայրենասիրութիւնն է։

Անձնուիրութիւնն հիմն է և իմաստութիւնն պսակն է հայրենասիրին։

Նա որ կը կարծէ թէ իւր հայրենակիցներ ատելով հանդերձ կրնայ սիրել իւր հայրենիք, այնպիսին խաբեբաներու վատագոյնն է։

Այս արեւու պէս պայծառ ճշմարտութիւն մ՚է, և սակայն ոմանք կը թուին չտեսնել զայն։

Ի՞նչ ըսել կ՚ուզէք, Պարո՛ններ, միթէ հայրենասիրութիւնն սատախօսութիւն, զրպարտութիւն, նախանձ և ատելութի՞ւն կը նշանակէ։

Մեք այնպէս գիտեմք թէ հայրենասիրութիւնն վսեմ առաքինութիւն մ՚է, թէ առաքինութիւնն յաղթութիւն է, թէ յաղթութիւնն պատերազմ կ՚ենթադրէ և պատերազմն՝ վտանգ, դժուարութիւն և անձնազոհութիւն։

Դժուար է որ դրամ տայ ոք յօգուտ հայրենեաց երբ շատ դրամ չունի ինքն—դժուար է հակառակորդին արժանիքն հռչակել—դժուար է հրաժարիլ զրպարտիչն հարուածելէ ի ժամու և ի տարաժամու—դժուար է քննադատելու պարտքն կատարել՝ կորուսանելով համակրողաց բազմութիւն—դժուար է անիրաւ բարեկամն յանդիմանել—դժուար է կեղծն ու սուտն հարուածել՝ անհաշտ թշնամեաց փոխելով զայնս—դժուար է արդար մէկին թեր ելնել հրապարակաւ ընդդէմ անարդարոց բազմութեան—և սակայն ճիշդ այդպիսի դժուար բաներն արութեամբ ընելն է հայրենասիրութիւնն. այդ նշաններով կը ճանչուի ճշմարիտ հայրենասէրն։

Գանք երկրորդ կէտին։

Ըսինք թէ հայրենասիրութեան պսակն է իմաստութիւնն։ Հերիք չէ որ հայրենասէրն անկեղծ և անձնուէր լինի, պէտք է որ նա զգուշաւոր, խոհեմ, աչալուրջ լինի։ Նա ոչ միայն պարտի սիրել, այլ և խելացութեամբ սիրել. ոչ միայն տալ, այլ և տալ ում արժան է. ոչ միայն զոհել, այլ և օգուտ յառաջ բերելու պայմաններով զոհել. ոչ միայն մարտնչիլ այլ և գիտնալ մարտնչիլ. ոչ միայն ուղիղ սրտով գործել այլ և ուղիղ սկզբամբ։

Մայրն անկեղծ և անձնուէր սիրով կը սիրէ իւր զաւակ, բայց եթէ ապուշ, նախապաշարեալ և անկիրթ է, յաճախ վնաս կը հասցունէ յանդէտս իւր սիրեցեալ զաւկի մարմնական և բարոյական կազմութեան։ Կապիկըն ալ ուժգին գգուելով իւր ձագ՝ խեղդեց զայն, կ՚ըսէ առակն։

Անկեղծ, եռանդուն, զոհաբերութեան պատրաստ հայրենասէր մ՚ալ կրնայ իւր իմացական կարգի սխալներով, իւր թիւր դատողութեամբք, իւր անհիմն կասկածներով, իւր անզգոյշ գրչաւ, իւր յախուռն գործունէութեամբ մեծ վնասներ հասցունել իւր սիրեցեալ ազգին։

Հասարակ, աննշան հայրենասիրին իմացական թերութիւններն շատ վնաս չունին, բայց գործիչի մի իմացական սխալներն կրնան աղէտաբեր լինիլ ազգին։

Գործիչի պարտքն այն չէ միայն որ չխաբէ իրեն հետեւողներն, այլ և պարտի ամեն հնարաւոր աչալրջութիւն ունենալ որպէս զի ինքն իսկ չխաբուի, չմոլրի, քանզի թէև գործիչն իւր թիւր դատողութիւններ ճըշմարիտ կարծէ յանկեղծ մտաց, տակաւին վնաս յառաջ կուգայ, ինչպէս որ թոյնն ալ կը սպաննէ թէև օգտակար դեղ կարծելով կլնեցունեն հիւանդին։

Այս ծանրակշիռ խորհրդածութիւնք արդեօք դող և սարսուռ կ՚ազդե՞ն մեր խմբագիրներուն և մեր գործիչներուն, գլխաւորաց և երկրորդականաց։ Արդեօք օգնած եղա՞նք ըմբռնելու թէ ճշմարիտ և օգտակար հայրենասէր գործիչ լինիլն ոչ միայն առաքինի սրտի այլ և զգօն իմացողութեան և ծայրագոյն խղճմտութեան գործ է—դժուար, մեծ, ահաւոր պատասխանատուութեան գործ—թէ գործիչն որքան և ուսեալ ոք լինի, տակաւին աւելի՛ լոյս, աւելի՛ օգնութիւն, աւելի՛ խորհրդակցութիւն պէտք է փնտռէ—թէ պէտք է որ սիրտ ու գիտութիւն, ջերմութիւն և լոյս, հայրենասիրութիւն և հանճար աջակցին։

Բ

Ո՞Վ Է ՀԱՆՃԱՐ

Հանճարն իմացական զօրութեան վերնագոյն աստիճանն է. ստորնագոյն աստիճանին վերայ կը կենայ ապուշն։ Հանճարի և ապուշի միջեւ անհամար են աստիճանք։ Տաղանդաւոր մարդն է հանճարեղէն անմիջապէս յետոյ կեցողն։ Հանճարն կը ստեղծէ նոր ինչ, կ՚առնու իրական յառաջդիմութեան նոր քայլ մի յանուն մարդկութեան. տաղանդաւորն կը հետեւի հանճարին ի մօտոյ և կը յերիւրէ գործեր հազիւ նուազ սքանչելի քան զհանճարին։

Ցեղաբան Կիւսդավ Լը Պոնի կը պարտիմք այն պատուական ծանօթութիւն մարդաբանական և հոգեբանական՝ թէ «Ասիական ժողովրդոց, Հնդկաց, Չինաց և այլոց միջին խաւերն ստորին չեն քան զհամապատասխան եւրոպական խաւս։ Այդ ժողովրդոց և մեր միջեւ գոյ եղող ճշմարիտ տարբերութիւնն այն է զի նոքա

չունին այն գերազանց մարդիկ, —ցեղի մի զօրութեանց հշմարիտ մարմնացումն եղող այն մարդիկ, որոց անկ են քաղաքակրթութեան մակարդակն օր քան զօր բարձրացունող մեծ գիւտերն։ Այդ կարգի մտքեր այնքան աւելի սակաւաթիւ կը դտնեմք որքան վար իջնեմք ցեղերու սանդղէն. վայրենեաց մէջ բնաւ չեն գտնուիր նոքա։ Այդպիսեաց թիւին նայելով է որ ժողովրդի մի մակարդակն կը չափուի։»(1)

Հայ ազգին վերջին երեսուն տարուան պատմութիւնն միայն բաւական է ցուցնելու թէ մեր ցեղն եւրոպեան բարձրագոյն ազգաց հետ պիտի կրնայ բաղդատուիլ երբ զարգանալու աւելի պատեհութիւն վայելէ։ Պատեհութեանց արդի անձուկ պայմաններուն մէջ իսկ մեր փոքրիկ ազգն բաւական մեծկակ գլուխներ հանած է զինուորական, դիւանագիտական, գիտական, գրական, արուեստական։ Մեր փոքրիկ ազգի անհատներն բազում մեծ ազգերու մէջ դժուարին և բարձր դիրքեր գրաւած են իբրև բանակաց զօրավար, իբրև համալսարանաց ուսուցչապետ, իբրև դահլիճներու պետ, և այս անհուն նշանակութիւն ունի մեր ցեղին մտային մակարդակին և հետևապէս հնարաւոր ապագային համար։

Հանճարք, որպէս բարձրաբերձ լերինք, բնականապէս հազուագիւտ են ամեն քաղաքակիրթ ազգի մէջ ալ, մինչ տաղանդաւորք, իբր բլուրք, բազմաթիւ են։ Մեր ազգի ներկայ վիճակի մէջ ուր հանճարք դեռ կիսաբաց են կամ ի կոկոնի և անծանօթ, աւելի գործնական է տաղանդներէ օգուտ քաղելու ջանալ ազգին համար։ Բազմակողմանի հմտութեամբ զարգացեալ տաղանդաւորք յաճախ հանճար մի կ'արժէ, և ստուգիւ աւելի օգտակար կը հանդիսանայ քան այն անձուկ և ամբարտաւան հանճարն որ բարոյական խոշոր պակասութեամբ արատաւոր է, որպիսեաց օրինակներ տիեզերական պատմութեան մէջ հազուագիւտ չեն։

Ուրեմն երբ հայ հանճարի վերայ կը խօսիմք, կ'ակնարկեմք նաև այդ կարգի տաղանդաւորաց։

Գ

ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՀԱՆՃԱՐՆԵՐ

Ամեն Հայ չէ հայրենասէր, և ոչ ամեն հայրենասէր հանճար է։ Կան տակաւն ազգին մէջ մարդիկ որք հայրենասէր և տաղանդաւոր են միանգամայն. և ահա ճիշդ այդպիսիք, և միայն այդպիսիք կարեն և պարտին ազգն առաջնորդել։ Այդպիսիք են ազգին իմացական և բարոյական կենաց բարձրագոյն մարմնացումներն, ազգին փառք և կեանք և զօրութիւն։ Դոցա նայելով է որ մեք կը քաջալերուիմք, և չկայ բան մի որ Հայութեան ապագային նկատմամբ այնքան վստահութիւն ներշնչէ մեզ որքան այդպիսի Հայերու գոյութիւնն։

Բայց ի՞նչ կը տեսնեմք այսօր ազգային գործունէութեան տապարէզին վերայ։— Մարդիկ որք ոչ տաղանդ ունին և ոչ հայրենասիրութիւն. ինքնակոչ գործիչներ որք անմիտ և անսիրտ արտահոսութեամբք կ'ապատեն հայ մտամուլն և կ'անպատուեն հայութիւնն. խափանարար արգելքներ որք անհեթեթ ամբարտաւանութեամբ կը կենան ժողովրդին և անոր արժանաւոր առաջնորդներուն մէջտեղ։

Ընթերցողք կրնան զմեզ խստադատ համարել։ Գուցէ ոմանք անարդար և արհամարհոտ իսկ վարկանին զմեզ։ Այլ մեք գիտեմք թէ ինչ կ'ասեմք, և եթէ ասա չեմք ձեռնարկեր ապացուցանելու մեր դատաստանի ուղղութիւն, չկարծուի թէ ապացոյցներ կը պակսին. ընդհակառակն, ամեն չարաթ նորանոր ապացոյցներ կը բարդուին հնոց վերայ։

Ցախուռն ընդհանրացում ըրած չլինելու համար պարտիմք ասա կրկնել որոշ կերպիւ թէ մեր յեղափոխական գործիչներու մէջ առաջին տեղն բռնող «Հնչակ»ին դէմ մեր քննադատութիւն միշտ իմացական տեսակետէ եղած է՝ նոցա ընկերվարական գաղափարաց դէմ, մինչդեռ միւսներն—այն հատն որ Եւրոպա կը հրատարակուի և այն եւս որ յԱմերիկա երևցաւ և դեռ դուցէ կ'երևի, բոլորովին տարբեր բնութեամբ թերթեր են։ «Հնչակ» թերութիւն ունի, իսկ նոքա ահագին պակասութիւններով արատաւոր են. նա կը մոլորի, բայց ցարդ չտեսանք իւր սուտն և զրպարտութիւնն. սոքա ոչ միայն ո և է լուրջ խորհուրդ և ազգային որոշ քաղաքականութիւն չեն ցուցներ, այլ և լիրբ իմաստակութեամբ կը ծամածռեն ուրիշներու գրուածքն, կ'ուրանան գործերն, կը մրոտեն անուններն, գիտութեամբ սուտ և զրպարտութիւն կը ստեղծեն և շրջաբերութեան կը հանեն. ուստի և մեք թէև չեմք Հնչակեան կը յարգեմք այդ կուսակցութիւն, իսկ միւսներուն համար խորին արհամարհանք կը զգամք և նողկանք։

Մեք երկու տարի է որ կ'աշխատիմք ցուցնել ժողովրդեան հասկացող մասին թէ որպիսիք են արժանի իւր վստահութեան. մեք՝ իբրեւ ազգին միջնակարգ դասուն պատկանող անհատ՝ միջնորդ լինիլ ջանացինք ազգին միջակ դասերն դէպ իւր բարձրագոյն և ազնուագոյն հոգիներն դարձուցանելու։ Թէ որքան արդար էինք և որ աստիճան յաջողեցանք, զայն ապագայն պիտի յայտնէ. այժմէն բարեգուշակ նշաններ կ'երևին։

Եթէ իսկոյն չենք կրնար ազգին հայրենասէր տաղանդներն գործի գլուխ անցած տեսնել, չե՞նք կրնար անմիտ և անսկզբունք եղողներն ի միջոյ բառնալ, որպէս զի ազնուագոյնք առանց դիւահարներէ խրտչելու կարենան իջնել յասպարէզ։

Աշխատեցէ՛ք, ո՛ բանիմաց հայրենասէրք։

ԽՐԱՏ ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Դեռ չի գրած՝ առաջ դու լա՛ւ միտք արա,
Ո՞վ է խեղճիդ գրուածները առնողը.
Յետոյ՝ և այն մասին փոքր ինչ հոգս արա,
Որ քեզ սիրէ քու յարգելի կարդացողը։

Դու այս երկու հանգամանքը լա՛ւ յիշէ,
Քու քանքարի վերայ չատ յոյս մի՛ դընել,
Եղի՛ր թէկուզ Խորենացի, Եղիշէ,—
Զը սիրելով քեզ՝ գրքերդդ չեն գընել։

Գրքիդ մէջը պարտաւանք մի՛ տալ Հային։
Հայը խրատ (թէև խելօք) ատում է.
Մի՛ ծիծաղիր նորա տխմար գործերին,
Որ նա աւանդ հօրենական կարծում է։

Մի՛ դու Հային իր խոր քնէն արթնցնիլ,
Բարոյական քունը նորա անոյշ է.
Կամ անցեալը նորա առջեւ մի՛ յիշել,—
Այդ անցեալը նորա աչքին սուր փուշ է։

...Գրէ՛, թէկուզ լեզուդ լինի սանսկրիտին,
Հայը չատ ուշք կարդացածին չի դնում.
Նա լսում է մի քանիսի դատմունքին,
Թէ ի՞նչ կերպով պարոն Օհանն է դատում։

Օհաններ են հայոց դատմանց փորձաքար,
Որոնց խօսքը ու վճիռը անփոփոխ
Միշտ մընում են նոցա համար դարէ դար։
Օհաններին քեզ սիրել տուր, խե՛ղճ գրող։

Այդ երկնաձիր քու քանքարը ի՞նչ օգուտ,
Թէ խօսածդ անապատի բարբառ է.
Հայի համար քու ասածը խիստ է մութ,
Նորա սիրտն էլ քու ղգացմանցը սառ է.

---

(1) Տես Gustave le Bon ի Les Premieres Civilisations, երես 166։

...Եւ դու, պովէդ, ընկճուել ես, վհատուել,
Երկինք թողած՝ երկիրումն ես քարշ գալի·
Սիրել գիտես, գիտցի՛ր, գիտցի՛ր դու ատել
Ինչ որ հոգիդ վկայում է ատելի։

Դու նըմանիր տղատախօս թռչնակին,
Որ երգում է անանձնասէր յոյսերով·
Ինչո՞ւ կիրքը քու երկնային ու հոգին
Զբաղեցնում ես երկրի չնչին գործերով։

ԴԱՄԱՌ-ԲԱԹԻՊԱ

ԲՈՂՈՔԱԳԻՐ

ՈՒՂՂԵԱԼ ՄԵԾ ՊԵՏՈՒԹԵԱՆՑ ԵՒՐՈՊԻՈՅ

Կիլիկիոյ հայ բանտարկեալք Օգոստոս 11, 1892 թուականու բողոքագիր մ'ուղղած են մեծ պետութեանց, յորմէ կ'առնումք հետեւեալ կարեւոր կտորն ինչպէս հրատարակուած է «Հնչակ»ի մէջ։

«...Զէյթունի մէջ խռովութիւն մը հանեց Մարաշի նախորդ կառավարիչ Սալէհ փաշան, բայց այդ խռովութեան զոհերը ծածկել ուզեց կառավարութիւնը· խօսքը չեղաւ 550 մանկանցս սուղ ժամանակի մէջ թունաւոր պատուաստիւ ջարդուելուն, խօսքը չեղաւ 17 յըղեաց աղէտին օրը վիժելոյն, խօսքը չեղաւ 8 անձանց խելագարելոյն, 7 տղայոց մահանալոյն ջղաձգութեամբ, մանկամարդ կնոջ մը, Մարղինի գնդակէ զարնուելով, սպանուելոյն, գերեզմանոցին մէջ՝ յուղարկաւոր խմբին և զոհին վերայ գնդակ պարպուելոյն, ի նախատինս և ի գոհացումն իրենց վրիժուց մեր կրօնին, եկեղեցեաց և վանօրէիցս բռնի զօրք լցուելոյն և պղծուելոյն, 7-է աւելի գիւղօրէից յաւար հարկանելոյն, եւն, եւն։— Թիւրիւտի Յարութիւն 25 տարեկան հայ կտրիճը կսպանուի նոյն օրը հրամանաւ, իբր աւազակ, և սպանող տասնապետը չաւուշ կը լինի, հինգերորդ մէճիտիէի պատուանշան ստանալով։

Մարաշի բանտին մէջ 7 անձինքս մեռան, ամենասոսկալի չարչարանօք ու զրկանօք· սպանեալք են՝ Կապրապետ Բողլիեան, Օհան Տատուրեան, Յովսէփ Եկանեան, Իսրայէլ Մինասեան, Խաչուկ Տատուրեան, Մինաս Պուսովեան, Աւետիս Յովսէփեան։ Սոքա մոլեռանդութեան և վրէժխնդրութեան զոհեր եղան, թէև բժշկաց կողմանէ տեղեկագիր առնուեցաւ թէ հնտախտէ մեռած էին։ Հալէպի բանտին մէջ Պոլսեցի Զրդանէս վարժապետը, զգալի կատարելութիւն և արժանիք ունենալով կ'անարգուի, պէս պէս գրկանաց կը մատնուի, խեղճ լքեալ, անօթի, մերկ և տառապեալ կը մեռնի· բժշկաց ռաբորդն ալ թիֆոյէ մեռած ըլլալ ցոյց կը տայ։

Ի յաւելումն մեր սոսկալի և անհամար աղէտից, այսօրերս Ֆրնուզի տէր Նիկողայոս եպիսկոպոսն, աւելի քան ութսուն տարեկան, պատկառելի ծերունի, զարմանալի կերպով մի կը բերուի Հալէպ և կը նետուի հռչակաւոր եղերնադործոց բանտին մէջ, զրկեալ ամեն հաղորդակցութենէ, խիստ արգելքի ներքև։ Աստի նորա հոգեւորական իշխանութեան տակ ապրող 15—20 գիւղօրէից 10,000 բնակիչքը թողլով անտերունչ և անհովիւ, իրենց կրած ու կրելի հարստահարութեանց վրայ քող մը ձգել, հետզհետէ փճացնել, և իրենց աղէտները հրապարակ հանող մը չը թողլու ազատ, և այսպէս ջնջել ազգայնութիւնն—այս եղած է սոյն գործողութեան բուն և ներքին նպատակն ու խորհուրդը։

Կը լսեմք թէ այսպիսի վարմունք ամենուրեք կը գործուին անխնայ մեր ամենաթշուառ արենակցաց վերայ, բայց մեզ վերագրեալ ամբաստանութեանց արժէքն ու զմեզ դատապարտող պատճառաց իսկութիւնը յերեւան բերելու համար կը պարտաւորիմք ի մէջ բերել զայնս, որք սակայն թղթի վրայ մելան են։»

Ցեսոյ բողոքագիրն մի առ մի կը քննադատէ թուրք դատարանաց անհիմն ամբաստանութիւններն իբր թէ Հայերն զօրք սպանած լինէին, բանտարկեալներ փախուցած, Ս. Փրկչի վանքն ամրացուցած, Զէյթունի եկեղեցեաց միոյն մէջ յեղափոխական խորհուրդ կատարած, զէնք և պարէն հայթայթելու համար հանգանակութիւն կատարած, ռազմամթերք բաշխած, Օսման ոստիկանն սպաննած, երեք զօրք վիրաւորած և գրգռիչ ոտանաւոր հեղինակած ու երգած։

ԻՄ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՅ

ԵՐԲՈՐԴՈՒԹԻՒՆ

Կը սիրեմ «L'Armenie» Փր. Մ. Զերազի կարող թերթն որ իբր լեռնաբերձ ամրոց կը կանգնի քրիստոնեայ տէրութեանց հորիզոնին վերայ· այդ բերանն որ կ'որոտայ զաղեխարշ լացն հայ քրիստոնէից յունկն Եւրոպիոյ։

Կը սիրեմ անձնուիրաբար զ«Հնչակն» որ «քեռին կուգայ» «Ինկիլիզը կուգայ» ըսող յուսախաբ ժողովրդեան մէջ մտաւ և զնոսա յինքնօգնութիւն կանչեց և կրթեց։ Նա վառեցաւ ի սիրտ երկչոտաց և եղաւ անվեհերութիւն· և անոնց որք զգալև լալ միայն գիտէին, սովրեցուց խորհիլ, կամիլ և շարժիլ։ Հայ ժողովուրդը այժմ փոխան արտասուքի արիւն թափել, փոխան լալու գոռում հանել, գանակոծուած ատեն փոխան ձեռքերը աչքերուն վրայ դնելու՝ իւր սրոյն ու հրացանին տանիլ, փոխան աղերսելու՝ պահանջել, ի մի բան փոխան վեհերոտ և ակնկալ սպասելու՝ սովրած է «Ջանա՛լ և սպասել։» Որպէս առիւծն իւր ճիրանաց և արծիւն իւր մագիլներու մէջ ունին ապրելու արդար օրէնքը, նոյնպէս այսօր Հայն իւր բռան մէջ ունի իւր իրաւանց արդար պահանջն։

Այո՛, կը սիրեմ զ«Հնչակ» որ ոչ միայն արթնցուց զՀայն այլ և կազմակերպեց ու կը շարունակէ կազմակերպել իմաստուն և անձնուրաց գործիչներու ձեռքով բուն իսկ Հայաստանի մէջ։ Նա Հայաստանի սրտին մէջ դրած է Հայկական ինքնօրինութեան սերմը, և քրտամբ ու արեամբ կը մշակէ զայն· մի նուիրական սերմ որոյ կորիզն է «մէկը ամենուն համար և ամէնը մէկին համար,» և որ հողի տակ արմատ կ'արձակէ։ Երբեմն ժողովրդեան հաւատք և վստահութիւն ներշնչելու համար մի ծիլ հողէն քիչ մի դուրս կը հանէ և վերսին հողի մէջ մտնելով կը զօրանայ և կ'աճի հոն։ Ես որ քանիցս պարտած եմ բոլոր Հայաստանը և Հայաստանէ դուրս եղած Հայաշատ քաղաքները, ստուգապէս ճանչցած եմ «Հնչակի» արդիւնքն· տեսած եմ ծերեր ու պատանիք, կոյսեր և հարսներ իսկ որք խմորուած են «Հնչակեան» խմրով։

Կը սիրեմ Հնչակը, և կը սիրեմ զայն քննադատողները երբ անաչառ ոգւով և ուղղամտութեամբ կը քննադատեն։ Բայց չեմ սիրեր թշնամանքն ու ատելութիւնն խծբծանքն ու զրպարտութիւնը «Արմէնիա» թերթին ընդդէմ Հնչակեանց, զորս կը յանդգնի մինչեւ անգամ կոչել «դիմակաւոր թշնամիք հայ հէք ժողովրդեան» և իբր մարդիկ որ «Հայ ժողովուրդը ջարդել կուտան իրենց անձնական շահուց համար։» Պարո՛ն, քննադատէ, բայց մի՛ յօշոտեր։ Ես և ինձի պէս և ինէ աւելի մեծ կորուստներ ունեցող Հայեր կան Հնչակի հետեւող,— տարագրեալներ, մահապարտներ, և քեզի չափ բանականութիւն ունեցող անձինք կան մեր մէջ, և եթէ մենք յօժարութեամբ յանձնառու կը լինինք ամեն բանի, դու ի՞նչ կըսես, և ի՞նչ կ'արժէ ըսածդ։ Ես չեմ

ուզեր կրիայի պէս պատեանի մէջ գոցել սիրտս և միտքս, չեմ ուզեր խորհիլ և գործել որպէս «նա ասաց,» և մեք ամենքս ալ զգուշանալու ենք վերջնականապէս և ըստ ամենայնի վերաբերիլ «այսինչեանի»· մտիկ ընենք ոչ միայն ինչ որ «նա ասաց» այլ ինչ որ սա «կ'ասէ» և ինչ որ «դա կ'ասէ» և կշռենք, դատենք, ընդունինք որու խօսքի մէջ որ գտնենք ճշմարտութիւն, արդարութիւն և անկեղծութիւն։

Սիրեցի և յոյժ կը սիրեմ «Հայքը», զի նա ոչ միայն կը քննադատէ այլ և կը գնահատէ ու կը քաջալերէ· թէև նոյն յօդուածն ալ կրնայ սակաւիկ մի քննադատուիլ, ոչ այլոց պէս խիստ, որպէս լսեցի «յսմանց։» Այդ յօդուածի հոգին սիրելի և նպատակը բարի է։ Եթէ ընթերցողը լաւ սրոճայ ի վերայ նոյն յօդուածին, պիտի գտնէ անոր մէջ մեր նպատակին բնութեան ճշմարիտ տարերքն։ Այո՛, մենք զ«Հնչակ» կատարելագոյն և ըստ ամենայնի անթերի չեմք կարծեր· ուրախ կըլլամք տեսնել թէ ողջամիտ մարդիկ իրենց լուսամիտ գաղափարաց լոյսն կը ցոլացուցեն «Հնչակ»ի ասպարեզին վերայ։ Կը հաւատամ թէ ամեն Հնչակեան իւր «վերապահումներն» ունի և «Հնչակ»ն ալ իւր գաղտնիքներն։

Կը սիրեմ զքեզ, «Հայք» որ ազգային կեանքի առողջ սաղմ կը պարունակես ծոցիդ մէջ, և ով խոկմամբ ընդունի քեզ իւր մտքին և սրտին մէջ, կը բարգաւաճի։ Դու գրական կիրթ ճաշակաւդ և հմտալից խորհրդովքդ քաղցր ու ներդաշնակ կ'երգես հայրենասիրութեան երգերն և կը դիւդես ունկնդիրներդ և կը բորբոքես յաւիւն ազգասիրութեան։ Պիտի կարդայի զքեզ գրական բարձր արժանիքդ գնահատելով եթէ ազգասէր իսկ չլինէի, և կրկին ու կրկին կը կարդամ իբրեւ ազգասէր։ Իբրև ազալի գոյժ հնչեցիր ականջիս թէ այլ ևս պիտի դադարիս քու կենսաւէտ բիւրմէդ, նիւթական սնունդի պակասութենէ։ Ես իբր հայ անհատ մը շատ սիրով մի քանի տօլար պիտի ձգեմ իբրեւ վառելիք քու կենսաւէտ վառարանիդ մէջ, և կը փափաքիմ տեսնել թէ բոլոր հայ երիտասարդք դիտեն քաջալերել օգտակար թերթերն։ Ո՛ պատուական «Հայք», դու իբրեւ բերան Ամերիկայի Հայ գաղթականաց, կեանք և պարծանք ես մեզ· և մեր պարտքն է պահել զքեզ կենդանի, լեցուցելով բերանդ սննդեամբ որով մեզ սնուցանես։

Կը խոստանամ «Հայք»ի յաջորդ թուով գրել թէ «ինչ է որ կը շարժէ զՀայն դէպ ի յեղափոխութիւն։»

27 Հոկտ· 92 ԳԵՂԱՄ

ՆԱՄԱԿ Կ· ՊՈԼՍԷՆ

(Փարիզի ԹԱՆ լրագրին ուղղեալ թղթակցութիւն մ'է զոր կը թարգմանեմք համառօտելով։)

Կ· Պոլիս, 24 Սեպտ· 92

Կլատսթընեան Նախարարութեան իշխանութեան հանդիպն նոր գաղափարաց հոսանք մի յառաջ բերաւ ատ։ Անգղիոյ ազատական կուսակցութիւնն նպաստաւոր կը համարուի Արեւելեան քրիստոնեայ ազգութեանց, և շատոնց հայ յուզիչք իրենց կրօնակցաց աչքին առջեւ կը դնէին անգղիական քաղաքականութեան այդ հաւանական շրջափոխութեան հաշիւն։ Այսօր երբ այդ շրջափոխութիւն կատարուած իրողութիւն մ'է, այն նոյն յուզիչք կը յաղթանակեն և կը պանծան իրենց մարգարէութեան իրացման համար։

Բնական էր որ կայսերական կառավարութիւնն զբաղէր այս նոր կացութեամբ։ Ուստի և ձեռք առաւ, քննեց ու զննեց Պերլինեան դաշնագրոյ 61դ յօդուածն, այդ սոսկալի յօդուածն միշտ առ կախ օսմ· դիւանագիտութեան գլխուն վերայ, և որոշեց բան մ'ընել այն ոգւով որով այդ յօդուած գրուած է։

Ահաւասիկ ինչ որոշման յանգած են· արտակարգ մեծ Ցանձնախումբ մի, կայսրութեան մարաջախտներէ և ուրիշ մեծ անձնաւորութիւններէ բաղկացած և արտակարգ իշխանութեամբ օժտեալ ընդ հուպ պիտի մեկնի դէպ հայաբնակ գաւառն Փոքր Ասիոյ։

Այս Ցանձնախումբ պիտի լսէ և ստուգէ քրիստոնեայ ժողովրդոց գանգատներն, որք ամեն օր կը ներկայացուին կայսերական կառավարութեան կամ կը հրատարակուին եւրոպեան մամլոյն մէջ։ Ցանձնախումբն պիտի կրնայ զեղծ պաշտօնեաներն պաշտօնանկ ընել։

Այս է գոնէ ինչ որ կը հաւաստեն կառավարական շրջանակաց մէջ։

Լեզուագիտական վարժարանն (լիսան մէքթէպի) փակուեցաւ, վասն զի մրցանակաբաշխութեան պաշտօնական ճառին մէջ վարժարանին տնօրէնն, Տաուտ Պէյ, խօսած է յառաջդիմութեան, քաղաքակրթութեան և կրթութեան վերայ։

Կ'երեւի թէ ոմանք կը ջանան կրօնական մոլեռանդութիւնն զարթուցանել։ Զգիտեմ ինչպէս միւսիլման աշխարհի մէջ յառաջ եկած է այն կարծիք թէ հին կրօնային մոլեռանդութիւնն գործած էր կայսրութեան փառքն, և թէ, յաջողութիւնն վերստին տեսնելու համար, պէտք է վերադառնալ հին սովորութեանց և անցեալոյն զուտ մոլորութեանց։ Ատկէ կը ծագի յետադէմ շարժումն որոյ բիւր արդեանց մին միայն է լեզուաց վարժարանին փակումն։

Այդ պատճառաւ է նաև որ երկրին բոլոր մեծ վարժարանաց մէջ—Միլքիյէ, Կալաթայ Սէրայ, Հարպիյէ են բոլոր կարգաց համար ստիպողական ըրած են կրօնական կրթութիւնն։ Ատոր ժամանակ գտնելու համար Միլքիյէի վարժարանին մէջ մէկ ժամ Ֆռանսերէն դասախօսութենէն գողցած են, (շարաթն 5 ժամէն 4ի իջեցուցած են Ֆռանսերէնի յատկացեալ ժամանակն։)

Կալաթա Սէրայի մէջ աւելի դէշ եղած է բանն։ Նոր կարգադրութեան համաձայն, այն ատեն երբ միւսիւլման աշակերտք կրօնական դաս առնուլ կ'երթան, քրիստոնեայ ուսանողք կը շարունակեն իրենց սերտողութիւն։ Այս կերպով լիսէիճ գլխաւոր նպատակն, որ է՝ չէզոք հողոյ վերայ ցեղերն հաշտեցունել, ի դերև կը ելնէ, և դպրոցն գոյութեան պատճառ այլ ևս չունենար։

Պոլսոյ սոֆթաներուն նկատմամբ տեղեկագիր տեղեկագրի վերայ շատոնց ի վեր կը մատուցուէին, և վերջապէս որոշում մի տրուած էր։ Կայսերական հրամարտակ մի հրամայած էր որ այդ սոֆթայից կասկածելի բազմութիւնն պարզապէս արտաքսուէր հեռու ի մայրաքաղաքէն։ Արդէն 7կամ8 հազար փաթթոցաւորներ ճամբայ դրուած էին երբ անձինք ոմանք երկիւղ ներշնչեցին դարմանին պատշաճութեան նկատմամբ։ Դիտել տրուեցաւ թէ այս սոֆթաներ, ժողովրդէն ելած, ժողովրդեան հետ ապրող, միակ զօրութիւնն էին իրենց ժողովրդական աղդեցութեամբ հակակշռելու Կ· Պոլսոյ քրիստոնեայ հպատակ ցեղերն։ Հնարաւոր յեղափոխութիւն մի նշմարել տուին, ուստի և հրամանն յետս կոչուեցաւ, և այսպէս մոլեռանդութիւնն միանգամ ևս յաջողեցաւ վիժեցունել մին ի լաւագոյն բարեկարգութեանց զոր Սուլթանն երբէք փորձած է, և որոյ գործադրումն երախտագիտութեամբ ողջունուած էր ժողովրդեան ամեն դասուց կողմանէ։

«ARA» ամսաթերթ անգղիերէն, Հայ-քաղաքական և գրական։ Տարեկան բաժնեգինն է երկու ռուփի։ Հասցէն է·—

11 WELLESLEY ST·, CALCUTA, INDIA

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳԷՈՐԳ ՏԻԳՐԱՆԵԱՆ. Առածք, ասացուածք, և զրոյցք Հայոց Նոր-Նախիջեւանի. 1892. Ռոստով, տպ. Յ. Տէր-Աբրահամեանի. ութածալ երես 118:

Գոհութեամբ տեղեկացանք «Արձագանք»էն այս նոր հրատարակութեան մասին, որ հայ բժշկի մի գրական անդրանիկ աշխատասիրութիւնն է և կը պարունակէ Առածներ, ասացուածներ, զրոյցներ, հանելուկներ, երգեր, հայ բառեր ևն, Նախիջեւանի հայ ժողովրդեան կենդանի բարբառէն ժողովուած և ի լոյս ընծայուած:

Ահաւասիկ պատուական առածներու մի քանին:

—Կը կայնի կը դողայ, կ'իյնայ կը սողայ: (երկչոտ)
—Ինչ մոտեցիր՝ այրէ, ինչ հեռացիր՝ պաղ է:
—Մի՛ բարձրանար՝ կախուիս, մի՛ ցածնար՝ կոխուիս:
—Ասես՝ գէշ կըլլաս, չասես՝ էշ կըլլաս:
—Ցադամայ մինչ ցայսօր,
Երէկ լաւ էր քան զայսօր:
—Կամաց քալես՝ քաղցած է կ'ասեն,
Շուտ քալես՝ կատղած է կ'ասեն:
—Տունը չինող կացինը դուրս կը մնայ:
—Խաչ չի հանեցիր չի հանեցիր, Մէյ մը հանեցիր,
ան ալ աչքդ հանեցիր:
—Երեսը թուքնուսը վարդի ջուր է կ'ասէ:

Արձագանք ի մէջ բերած է նոյն գրքէն մի քանի գաւառական բառեր — առնաք (աղգականի առն), ետքնին (վերջին զաւակ), արինջարդ (մարմնի կապտած մասըն), հացթաթախ, հայտապակ, նիժալ(մեղմ անձրեւել), աղտկորուստ (աղտը կորցնող, այնպիսի լաթ որու վերայ աղտը չնշմարուիր):

Այս վերջին բառին մասի պէտք է դիտել սամք թէ Ակնայ գաւառաբարբառին ևս ծանօթ է այն, բայց ոչ «աղտկորուստ» այլ «աղտկորոյս»ձեւով, և այս է բուն և ուղիղ հայ բառն, որոյ նման է նաև գրաբարի «հոգեկորոյս» բառն, (հոգին կորսնցունող, կորուսիչ հոգւոյ):

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳԻՐՆ

Տնօրէն Խորհուրդ
Երիտ. Ընթերց. Ընկ.
Ռուսճուք
27 Սեպտ. 92
Թիւ 20

Մեծապատիւ Տէր Խմբագիր «Հայք» Ազգօգուտ կիսամսեայ Թերթի

Մեծ. Տէր,

Հաստատելով թիւ 9 և 92 Յունիս 10 ամսաթիւ նամակնիս. պատիւ ունինք ծանուցանել Ձեզ թէ՝ Ընկերութեանս կանոնագրոյն 4դ Յօդուածի 2դ տրամադրութեան համեմատ պատուակալ անդամ նշանակուած էք և անուննիդ պատույ տախտակը անցած է:

Բաղձայոյս եմք որ մեր այս որոշում կ'արժանանայ Ձեր ազնիւ ընդունելութեան:

Այս առթիւ, հաճեցէք Տէր, ընդունիլ նաև մեր խորին յարգանաց հաւաստին:

Ի դիմաց Տնօրէն Խորհրդոյ
Ատենադպիր — փ. Ատենապետ
Ս. Վարդանեան — Գառնիկ Տէօսմէճեան

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն մեզ գրուած նամակէ մը կ'առնումք հետեւեալ տողերն.—

Եթէ ստոյգ է զրուցուածն, Գերմանիայի զօրավար Գոլցի (?) —

Եթէ ստոյգ է զրուցուածն, Պելճիքացի զօրավար Պռիալմոն շատ ոպկաստոր դտած է Պոսֆորի ամրութիւններն. բազմածախ փոփոխութեանց պէտք ունին Սեւ Ծովու կողմէն ռուսական զրահաւորաց դէմ պաշտպանել կարենալու համար զմայրաքաղաքն: Հրետանիները սխալ զետեղուած են եղեր, և թուով ալ անբաւական: Տարտանելի ամրութիւնք ևս կարօտ են փոփոխութեանց, բայց ոչ Պոսֆորիններուն չափ: Աւելի մեծ պակասութիւն մի, որ դրամով չկրնար լեցուիլ, է ձեռնհաս, տաղանդաւոր սպայից պակասութիւնն:

Բ. Դուռն ռուսական վերջին ապտակն ուտելէն ի վեր բաւական կակղցած է. Պուրկազի յոյն վարժարաններն կը բացուին եղեր նորէն՝ հրամանաւ Սթամպուլովի, որ բաւական նշանակիչ է:

Ռուս և Թուրք յարաբերութեանց այս նոր վիճակին կը պարտիմք ըստ մասին նաև Խրիմեան Հայրիկի իբրև կաթողիկոս վաւերացումն Ջարին կողմանէ: Ջարն ուզեց բան մ'ընել որ Թրքին անհաճոյ և խիստ դաս մի լինի և իւր Հայ հպատակաց ուրախութիւն պատճառէ: Երբ կ'ըսեմք թէ եւրոպեան կամ միջազգային քաղաքականութեան ընթացքն ալ պէտք է նպաստաւոր առիթներ ընծայէ մեզ, այսպիսի բաներ ըսել կ'ուզեմք։

«Թան»ի կը գրեն Կ. Պոլսէն.

Վերջին Ռուսընդթուրք պատերազմէն յետոյ Սուլթան Ապտիւլ-Համիտի մեծագոյն հոգն եղաւ բանակն վերակազմել, և ի գին աչագին ծախուց այժմ թուրք բանակն այնպէս զարգացած է որ ոչ ևս կրնայ նկատուիլ իբրև խոտելի քանակութիւն: Նա կարէ ի դիպել հարկին, ոտքի հանել առնուազն մէկ միլիոն առաջնակարգ զօրք: Ճշմարիտ է թէ հրամանատարութիւնն համաբերձ չէ իւր կոչման, բայց եւրոպացի ռազմագէտներէ առաջնորդուելով՝ կրնայ թուրք բանակն, որ իւր հին բարեմասնութիւններ կորուսած չէ, գտնել թերեւս այն ուղին որ զնա առաջնորդած է այնքան փայլուն յաղթութեանց:

...Երրեակ դաշնակցութեան գործիչք ամեն հնարաւոր միջոց գործածեցին զՍուլթան իրենց կողմ առնլու, յանձն առնլով օգնել նմա ընդդէմ Ռուսիոյ, մինչև իսկ խոստացած են եղեր Թուրքիոյ վերակցել հիւսիւսային կորուսեալ գաւառներն այնպէս որ կարենայ ասիական հզօր կայսրութիւն մի կազմաւորել:

Միւս կողմէն Ռուսիա խոստացած է եղեր նմա վերադարձունել եւրոպեան Թուրքիոյ ձեռքէ ելած գաւառներն, եթէ Սուլթանն իւր կողմ անցնի:

Հոկտ. 21ին կը հեռագրեն Կ. Պոլսէն Թան լրագրին.

«Մանասթըրի (ի Մակեդոնիա) յոյն դպրոցին տնօրէնն ձերբակալուած է այն ամբաստանութեամբ թէ ապստամբական յանձնախումբ կազմել ուզած է և կրետական յանձնախմբոց հետ յարաբերութիւն ունեցած: գաղտնիքն յայտնող թղթեր գտնուած են նորա բնակարանին մէջ և Սուլթանին յղուած:

Հեռագրեր ծանուցին նաև Կրետացւոց նորէն ապստամբած լինիլն ընդդէմ Թուրք կառավարութեան: Առաւել քան մէկ կէտերու վերայ ընդհարումներ տեղի ունեցած են Կրետացւոց և Թուրք զօրաց միջեւ: Ի Գոմի-

դատէս Սեպտ. 4ին տիղի ունեցած կռուոյն մէջ Թուրք զօրքն հարկադրեցաւ յետս նահանջելու քրիստոնէից կըրակէն սադնալեալ: Հետեւեալ օրն Քանտրի ամրութեանց պահապան Թուրք զօրքն քրիստոնից կրակին ենթարկուեցան ժամերով, Կղզւոյն ընդհանուր կառավարչին խնդրելովն ապստամբք յղեցին իրենց եպիսկոպոսն զՄր. Քսիրուտաքի, որ բացատրէ իրենց գանգատները։

Հայրենասէր և ուսեալ երիտասարդի մի նամակէն կ'առնումք հետեւեալ տողերն.—

Ո՞վ կարող էր նոյն իսկ վերջին կաթողիկոսական ընտրութենէն ոչ շատ օրեր առաջ նախատեսել միաձայնութեամբ ընտրութիւնն մեր պաշտելի Հայրիկին. ո՞րքանիք ի մէնջ պատրաստուած չէին լսելու ամենաանախորժ լուրեր Էջմիածինէն։ Եւ նոյն իսկ այն փառաւոր ընտրութենէն յետոյ ո՞րչափ կասկածանօք դարձուցինք մեր ուրախութեան արտասուօք լի աչեր դէպ ի Ձարի դահն...։ Եւ ահա Ձարն եւ այո՛ ըսաւ։ Այս անակնկալ և բարեգուշակ յաջողութիւններն տեսնելով կ'ըսեմ Աստուած ընդ մեզ է։

Հաւատացէք, Հայեր, և ցնծացէք։

Ռուս լրագիրներն ալ վերջերս յաճախ կը գրեն Խրիմեան վեհ. Հայրիկի մասին։ «Մշակ»ի մէջ թարգմանուած է Փեթրպուրկի թերթերէն միոյն յօդուածն, յորմէ կ'առնուք հետեւեալ կտորն.—

«Պատկառելի արքեպիսկոպոսի կրօնական ներողամտութիւնը և փիլիսոփայական հայեցուածքների լայնութիւնը նրան հռչակել են իբրև ազատամիտ։ Իրօք նա կարող է այդպէս համարուիլ նրանց աչքում, որոնք ջատագով են մոլեռանդ կրօնական խտրութեան, որովհետեւ Խրիմեանի համար գոյութիւն չունի ոչ մի զանազանութիւն լուսաւորչական, կաթոլիկ և բողոքական Հայերի մէջ։ Հանդիսանալով քարոզիչ քրիստոնէական սկզբունքների՝ այդ բառի ամենաընդարձակ, վերացական և մարդասէր նշանակութեամբ, արքեպիսկոպոս Մկրտիչը պահանջում է Հայից ամենից առաջ՝ որ նա ճշմարիտ քրիստոնեայ լինի։»

«Աչքը լոյս» բանասէրներուն։ Աստուածաշունչի թարգմանութեան առաջին մասը ի լոյս ընծայուեցաւ. հոգելոյս Ներսէս պատրիարքի փափաքն է որ կ'իրագործուի ահա երբ ինքը ներկայ չէ ալ, կեդրոնական վարժարանին պէս։

Հայր Հիւնքեարպէյէնտեան, Մատթէոս Գարագաշեան և Կոստանդեան պատուելի՝ ահա երեք աշխատաւորներն այս հսկայ և ապերախտ գործին։ Քրիստոնէական երեք բաժանումներէն, հայ եկեղեցւոյ պաշտօնեայ մը, հռովմէական նախկին վարդապետ մը և բողոքական քարոզիչ մը միացած, Աստուածաշունչը թարգմանելու սիրով։»

ՄԱՍԻՍ

—Թիֆլիսի մէջ ի մօտոյ լոյս պիտի տեսնէ լիակատար ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆ։

—Ռուսահայ աշխարհահռչակ նկարիչ Այվազովսքի մի քանի օր ի Նիւ Եորք անցունելէ յետոյ ուղեւորեցաւ դէպ ի Նիակարայի ջրվէժն և վերադարձաւ։

Լին (Մասաչուսէց) քաղաքէն կը գրէ մեզ թղթակից մի.—

Մեր գաղթականութիւնը նոր տեսակ մի գոհացում կը զգայ, գրեթէ պարծանք մը, վասն զի այժմ հայ ընտանիք մ'ունի իւր մէջ։ Պրն. Փիլիպոս Մուրատեան յաջող երիտասարդն բերել տուաւ պոլսէն իւր նշանածն և ամուսնացաւ։ Այս նորամուսին հայ ընտանիքը Ամերիկացւոց առջև պատուաւոր է և մեզի ամենուս ալ պատուաբեր

Պրն. Սանդիկեան Մասաչուսէցի Նայտհըմ քաղաքին մէջ իբրև օգնական քաղաքական երկրաչափ պաշտօն ստացաւ։ Նաեւ մեր ուրիշ մէկ հայրենակիցը, ատամնաբոյժ Միրագեան, Պոսթընի մէջ յաջողութեամբ ընկերակցած է Ամերիկացի ատամնաբուժի մի և լաւ անուն սկսած է հանել։

Լինէն կը գրեն մեզ։

Ի Քաջալերութիւն օտարաբնակ Հայոց և ի խընդակցութիւն «Հայք» Ազգօգուտ լրագրոյ կը ծանուցանեմք Լինաբնակ Հայոց նորակազմ «Արշալոյս Հայաստանի» ընկերութեան գոյութիւնը և նպատակը.—Հաւասարութեան, եղբայրութեան և ազատութեան վսեմ գաղափարներն տարածել ի Հայս և ի պահանջել հարկին օգնել Սուրբ Գործոյն։

Կը բարեմաղթեմ յերկնուստ անկեղծ գործիչներին կեանք և պողպատեայ կամք, հաստատութեանց ուղղութիւն և յարատեւութիւն։

Կ'ողջունեմ սրտագին «Հայք»ն «Հնչակ»ն և «ԼԱռմէնի»ն։

Յիշեալ ազգօգուտ թերթերու գաղափարներին տարածմանը տենչանօք աշխատող և ազատութեան սիրահար.—

Մ. Կ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Լովէլէն (Մասաչուսէց) կը գրէ մեզ թղթակից մի.—

Շիրոյի մէջ Քէֆէրտիւզ գիւղը որուն բնակութիւնը 1570 տունէ կը բաղկանայ. 1500 տունը Քիւրդ են իսկ մնացեալ 70 տունը Հայ են։

Այդ տեղի հայերը բաւական խղճուկ վիճակի մէջ են, չունին եկեղեցի, չունին դպրոց. խեղճ գիւղացիք ասկէ 20 տարիէ չափ առաջ ըրին փորձ մը եկեղեցի մը հիմնարկելու, բայց աւա՜ղ որ Քրդաց բարբարոսութիւնը չթողուց որ խորհուրդնին յառաջ տանին։

Այս անցեալ փօսթով իմացանք որ Քէֆէրտիւզ գիւղին մէջ Հայ մը տուն մը ունի եղեր և տանը տակի յարկն ալ խանութ շինած է եղեր։ Խէօմպէկ անուն Քիւրտ մը կուգայ կըսէ տանտէր Հայուն (Պետրոս Պօղօրեան) այդ խանութը ինձ վաճառելու ես, բայց Պօղօրեան կը մերժէ։ Քիւրդը կը նայի որ կարող չէ խանութը գնել, կսկսի գիշերները տանտիրոջ նեղութիւն տալ. վայրագ Քիւրդը իրեն հետ ուրիշներ ալ առած գիշերները կը սկսի նեղութիւն տալ. Հայուն պատուհաններին ռիվօլվրներ կը պարպեն և տան ծխնելոյզը կը քակեն, Հայը կը նայի որ չպիտի ըլլայ, ստիպմամբ կը ծախէ Քիւրդին։

Ահա միշտ ասանկ է այդ տեղ գտնուած քրիստոնէից վիճակը։ Ի՞նչ ընելու եմք։

Ա. Գ. Մ. Մ.

—Այն Հայերու խումբը որու մասին նախորդ թուով ըսինք թէ ետ պիտի դարձուէին, արդարև ետ դարձուած են։ Նոցա ամենն ալ Ատանայի կողմէն եկած էին, և որքան գիտեմք, Խարբերդու կամ այլ գաւառէ հայրենակիցներ չկային նոցա մէջ։

Մինչև անգամ փաստաբանի աջակցութեան ալ դիմուեցաւ այս հայրենակիցներ ետ յղուելէ փրկելու համար, բայց օգուտ չըրաւ. վճիռն տրուած էր նոյն ինքն ետ յղուողներու յայտարարութեան և ցոյց տուած նամակներուն համաձայն, և անդառնալի էր։

ԹՐՈՅԻ ՀԱՅԵՐՆ ԵՒ «ՀԱՅՔ»

Ընթերցողք կրնան յիշել թէ Թրոյի Հայրենակիցք թէև փոքրաթիւ բայց միշտ փութկոտ գտնուած են Հայքի ձայն և ձեռն տալու երբ համակրելի խնդիր եղած է ի մէջի։ Այս անգամ 17 թալէրի գումար մի հանգանակելով յղած են «Հայք»ի հրատարակութեան ի նպաստ։

Ահաւասիկ նուիրատուութեանց ցանկն։

Մեծ. Տեարք Ցալճեան 5 թալէր. Թամամեան 3թ. 75սէնթ. Հաճի Աղա 1թ. Օվակիմ գրիգորեան 1թ. Մխիթարեան 1թ. Կ. Թումասեան 1թ. Ղուկաս, Ա. Գրիգո-

րեան, Պ. Ղուկասեան, Խ. Զարչեան, Ց Թորոսեան, Խ. Պետրոսեան, Յ. Առաքելեան, Ս. Արսենեան, իւրաքանչիւր 50 սէնթ. Մ. Յովսէփեան 25 սէնթ ։ ընդ ամենայն 17 թալէռ ։

Հրապարակաւ կը յայտնեմք մեր ջերմ շնորհակալիքն մեր Թրոյարնայ աջակցողաց ։

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի ։ 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ ։

«ՄԱՐՋԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան ։ բազում ձևերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեան, գին 50 սէնթ կամ 2 ու կէս Փրանք ։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէռ կամ 5 Փրանք ։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, Նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան ։ Գին 20 սէնթ կամ 1 ր.

KRONOFF & OLDSEN

FINF CUSTOM TAILORS

And Dealers in

GENT'S FURNISHINGS

ԴԵՐՁԱԿ ԵՒ ՀԱՆԴԵՐՁԱՎԱՃԱՌ

214 Main St.

WORCESTER MASS.

A. A. McLAUGHLIN

137 MAIN ST.

WORCESTER, MASS.

Ես բազում Հայ յաճախորդներ ունիմ և ամեն չափաւոր երեկոյ հայազգի վաճառող մ'ալ կը պահեմ վաճառատանս մէջ որ անգլիերէն խօսելու անվարժ Հայերուն կը ցուցնէ մեր ապրանքներն, որք են գլխարկ, վերարկու, սռնազգեստ (փանթոլոն), գուլպա, շապիկ են. են. Մեր գին ամենուն համար մէկ է եւ չափաւոր է. եկէք եւ տեսէք ։

ՅՈՎ.ՀԱՆՆԷՍ Մ. ՀԱՅԿՈՒՆԻ

Պատիւ ունի ծանուցանել թէ իւր 1554 B. Way 46 և 47դ Փողոցներուն միջեւ Constantinople Bazaarի (Քոնսթանթինոփլ Պազար) մէջ ունի Թրքական մեծաքանակ ձեռագործներ (embroidery) գորգեր (խալի), ուրիշ զանազան Թուրքիոյ ապրանք, և կը ծախէ դիւրագին գներով այն Հայերու որք կ'ուզեն ամարանոցներն և այլ տեղեր երթալ վաճառականութեամբ, և անոնց եւս որք կ'ուզեն ընծաներ տալ իրենց բարեկամներուն և գործարանապետներուն ։ Թէ ապրանաց հարազատութեան և թէ գներու չափաւորութեան մասին կրնամք կատարելապէս վստահեցունել մեր Հայրենակիցները, ինչպէս արդէն շատեր փորձով գիտեն ։

Հայե՛ր

Երբ նոր գլխարկի, օձիքի կամ ո և է արական հանդերձեղենի պէտք ունենաք, գնացէք New York Hat House, 14 Front Street, Worcester, որ Մէյն փողոցին մօտիկ է, հոն պիտի գտնէք լաւ ապրանքներ միայն, և շատ աժան ։

BUSH & CO

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԳԵՂԱԳՈՐԾ

(հաստատեալ ի 1849)

56 FRONT STREET WORCESTER, MASS.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE NEW YORK CITY

16 և 17 րդ փողոցներու միջև արևելեան կողմն ։

—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—

Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

RIPANS TABULES

RECULATE THE

STOMACH, LIVER AND BOWELS,

AND

PURIFY THE BLOOD.

A RELIABLE REMEDY FOR

Indigestion, Billousness, Headache, Constipation, Dyspepsia, Chronic Liver Troubles, Dizziness, Bad Complexion, Dysentery, Offensive Breath, and all disorders of the Stomach, Liver and Bowels.

Ripans Tabules contain nothing injurious to the most delicate constitution. Pleasant to take, safe, effectual. Give immediate relief.

Sold by druggists. A trial bottle sent by mail on receipt of 15 cents. Address

THE RIPANS CHEMICAL CO.

10 SPRUCE STREET, NEW YORK CITY.

Ripans Tabules are of great value.
Ripans Tabules cure headache.
Ripans Tabules cure constipation.
Ripans Tabules : for liver troubles.
Ripans Tabules : a family remedy.
Ripans Tabules : for sour stomach.

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE, NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

THE WORCESTER MECHANICS SAVINGS BANK

311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԷՔԷՆԻՔՍ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԷՆՔ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կըրնան ապահովապէս դնել վերոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը վճարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտամսոց կէսէն հաշուելով ։

HAGOPIAN

PHOTO-ENGRAVING CO.

3 Great Jones St. New York

Engraving for all purposes of illustration in line & half-tone.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ